տանուտերն էր: Գյուղացիները նրան ասին՝ իսկ արի քո տանուտերության հաշվետվությունն արա: Հաշվետվությունից հետո նրա վրա շատ (պարտք) մնաց, ճշտիվ պահանջում էին: Իսկ նա նրանց խաբեց և ասաց՝ ինձ երեք օր ժամանակ տվեք, ես կհատուցեմ: Բայց նա փախուստով ելավ, գնաց Սպահան Նախիջևանի իշխան Մահմադ Ռզա խանի մոտ և ասաց՝ իմ դուստրը կտամ քո որդուն, և դու ազատիր ինձ գյուղացիներից: Իշխանն արեց ըստ նրա կամքի: Գրեց Շաղկերտի գյուղացիներին, թե ես առա դրա հաշիվը, ամենը ինձ հասավ, ուստի դուք իրավունք չունեք դրա հետ խոսելու:

Իր (Մահմադի) որդին Մուրթուզա Ղուլին էր Երևանում Զալից հետո տեղապահ: Սրան գրեց (Մահմադը), թե մարդ ուղարկիր Շաղկերտ, քեզ մոտ բեր տանուտեր Մալխասի դստերը: Այս լսելով հորից՝ մարդիկ ուղարկեց մի մահմեդական կնոջ հետ կույս Թամամին բերելու:

Հրավիրակները գնացին, ներկայացրին չար ավետիքը: Մինչև այդ աղջիկն ու մայրը այդ բանը չէին լսել, երբ լսեցին, գոռում, ճանկում էին երեսները, փետում էին մազերը, լացում ու հառաչում էին: Իսկ մահմեդականները բռնեցին երանելի կույս Կատարյալին, մերթ քաշելով, մերթ ոտքի վրա տարան մտցրին ժանվարի մեջ (ծածկված պատգարակ): Իսկ պիղծ Մալխասը պատվեր ուղարկեց Մուրթուզային՝ ասելով, թե այնքան չխոսես իմ դստեր հետ, մինչև ես գամ հարսանիք անեմ:

Եվ նրան առան, տարան Երևան, ցույց տվին Մուրթուզա Ղուլուն: Տեսնելով նրա գեղեցկությունը (Մուրթուզան) զարդարեց նրան ոսկով, արծաթով, դիպակով և այլ զարդերով պճնեց, սպասում էր նրա (աղջկա) հոր գալստին, որպեսզի հարսանիք անի:

Իսկ երանելի Կատարյալ կույսը չէր ուրախանում, ոչ ուտում էր, ոչ խմում, այլ միշտ մտածում էր, թե ի՞նչ հնարքով կարող է ազատվել: Նստում էր ձորի դիմաց, բարձր քարերի գլուխներում զննում էր, գոնե մի ցած տեղ գտնի, որ իջնի, փախչի, բայց ցած տեղ չգտավ: Ապա մի գիշեր իր մտքում մտածեց, թե կընկնեմ քարերից ցած, լավ է իմ կամքով և Քրիստոսի հավատով մեռնել, քան ուրացությամբ ապրել: Եվ խաչակնքելով երեսը՝ բարձր քարերից վայր ընկավ և մի քիչ ուշաթափվեց, ապա վեր կացավ, նայեց կամրջին, որ Հրազդան գետի վրա էր, անցնելով այն, ուղղվում է Կարբի գնալու:

Ահա հանդիպում է մի մահմեդական, (աղջիկը) աղաչում է նրան, տալիս է նրան մի աբասի (քսան կոպեկ) և ասում՝ ինձ Կարբու ճանապարհը ցույց տուր: Նա ցույց է տալիս և ասում՝ այգիները շրջանցիր, մտիր Նորագյուղ, այնտեղ քեզ ճանապարհը ցույց կտան: Նա գնաց, անցավ գյուղը, առապար ճանապարհով գնում էր, չգիտեր, թե ուր է գնում: Նայում ու տեսնում է, որ իր առջևից բազմաթիվ մահմեդականներ են գնում՝ տղամարդիկ, կանայք բեռնակիր անասուններով՝ Արայի լեռան հանդեպ հավաքվեցին: Շտապեց հասավ նրանց, մտածեց, թե նրանք որևէ գյուղ են գնում: Ոչ նրանք հարցրին նրան, թե ո՞վ ես, կամ ո՞ւր ես գնում, ոչ էլ նա նրանց որևէ բան հարցրեց, անմռունչ գնում էր նրանց հետ, նրանց հետևից: Գնալով հասան Եղվարդ գյուղի դիմաց: Սուրբ կույսը մահմեդականներին հարցրեց գյուղի մասին, նրան ասացին, թե հայոց գյուղ է, կոչվում է Եղվարդ:

Ապա հեռացավ նրանցից և ուղղվեց դեպի գյուղը: Մտավ մի քրիստոնյայի տուն, ապա ամեն ինչ պատմեց իր մասին: Եվ աղաչեց նրանց մի քահանա կանչել, որ իրեն հաղորդի: Գիտեմ, որ ահա սպանելու են ինձ: Նրանք գնացին բերին Մկրտիչ անունով մի այրի քահանա, խոստովանվեց, պատմեց նրան ողջ կյանքը՝ ծնունդից մինչև այս օրը, որի մեջ էր և հաղորդվեց Քրիստոսի արյունով ու մարմնով:

Գյուղի տեր մահմեդական Ուզարլուն ասաց՝ արձակեք նրան, ուր կամենում է թող գնա: Իսկ ոմն պիղծ՝ Սահակ անունով, որ Եղվարդ գյուղի տանուտերն էր, ասաց՝ ես իշխանից վախենում եմ, որ մի վտանգի տակ ընկնեմ դրա պատճառով: Գնաց պատմեց իշխանին: Իշխանն ասաց՝ ես նրա համար հոգացի, եթե այդպես է, գնացեք, մերկացրեք նրան և կորցրեք:

Երկու մահմեդական դրեց պիղծ Սահակի հետ, որ գնալով կապեցին երանելուն և գյուղից հեռացրին, մերկացրին զարդերից, իրենց ոտքերի զանգվանները արձակեցին, որ չաշուրբաղին է և տվին Սահակին, և նա խեղդեց սուրբ կույս Թամամին՝ Կատարյալին լավ մահով և ուղիղ հավատով, մաքուր մտքերով և Քրիստոսի ճշմարիտ սիրով:

Նրա վրա քարեր կուտակեցին և թողին գնացին: Հաջորդ օրը սրբի պիղծ հայրը եկավ և ասաց իշխանին, ինձ ցույց տուր իմ դստե-